

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ.....	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	9
5.1. Բյուջեի եկամուտներ.....	9
5.2. Բյուջեի ծախսեր.....	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	12
5.4. Պետական պարտք.....	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	13
6.1. Գնաճ.....	13
6.2. Ավանդներ և վարկեր.....	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	14
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	15

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվությունը, արտացոլելով կորոնավիրուսի համավարակի տարածման և դրա կանխարգելման համար կիրառվող սահմանափակումների բացասական հետևանքները՝ 2020 թվականին, սկսած ապրիլ ամսից, դրսևորում է զգալի բացասական միտումներ: Սակայն, եթե երկրորդ եռամսյակում տնտեսական անկման զգալի չափերը սպասելի էին՝ բավականին խիստ տնտեսական սահմանափակումների կիրառման և դրանց վերացումից հետո տնտեսության վերաբացման ժամանակով պայմանավորված, ապա երրորդ եռամսյակում, ավելի սպասելի էր այնպիսի ցուցանիշներ, որոնք կարտացոլեին տնտեսության աստիճանական վերականգնման դինամիկան:

Մինչդեռ, ինչպես հուլիսին, այնպես էլ օգոստոս ամսին տնտեսական ակտիվության անկումը շարունակել է խորանալ: Օգոստոսին ՏԱՑ-ի անկումը, նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ, կազմել է -9.8%: Արդյունքում, կուտակային ՏԱՑ-ի ցուցանիշի անկումը խորացել է՝ հունվար-հուլիսի -5.7%-ից հունվար-օգոստոսին հասնելով -6.4%-ի:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.3, -2.6 և -1.0 տոկոսային կետերով: Արդյունաբերության դրական նպաստման չափը փոքրացել է՝ նախորդ ամսվա 0.3 տոկոսային կետից դառնալով 0.2 տոկոսային կետ, որը հիմնականում ապահովվում է հանքարդյունաբերության աճի շնորհիվ: Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ակտիվության ցուցանիշը հրապարակվում է միայն եռամսյակային կտրվածքով, սակայն ՏԱՑ-ին ճյուղերի նպաստումների


հաշվարկից, մնացորդային եղանակով, կարելի է ենթադրել, որ այն ունեցել է դրական նպաստում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության կուտակային աճի տեմպը նվազել է 0.4 տոկոսային կետով, թեև այն դեռևս մնում է դրական մակարդակում: Արդյունաբերության ոլորտում հունվար-օգոստոս ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 0.9%, ինչը պայմանավորված է օգոստոս ամսվա նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 1.2% անկմամբ:

Արդյունաբերության ոլորտում դրական կուտակային աճը ապահովվում է հանքարդյունաբերության աճի շնորհիվ, թեև այն նույնպես դանդաղում է: Այսպես, հունվար-հուլիս¹ ամիսներին վերջինիս աճը կազմել է 20.9%՝ հունվար-հունիսի 24.3% փոխարեն, իսկ հանքարդյունաբերության նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 3.9՝ նախորդ ամսվա 4.3 տոկոսային կետի փոխարեն: Մշակող արդյունաբերության ենթաճյուղում նույն ժամանակահատվածում գրանցվել է 3.6% անկում՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 2.6 տոկոսային կետ բացասական նպաստում:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 2.2% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.3 տոկոսային կետ նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 18.8 տոկոսով՝ ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում տնտեսական ակտիվության կուտակային անկման բարձր տեմպերը պահպանվում են, սակայն օգոստոսին նկատվում է 12-ամսյա անկման որոշակի մեղմում: Ընթացիկ տարվա օգոստոսին շինարարության ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել է 5.3%-ով, ինչի արդյունքում, շինարարության անկումը հունվար-օգոստոսին կազմել է մոտ -19.1%:

¹ Հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների 12-ամսյա անկման տեմպն ամենաբարձրն է մյուս ճյուղերի համեմատ: Համալարակի հետևանքով առաջացած ճգնաժամը հատկապես հարվածել է ծառայությունների ոլորտին: Սակայն, սահմանափակումների մեղմման պայմաններում սպասվում էր, որ կարճաժամգրվի որոշակի բարելավում այս ոլորտում: Մինչդեռ օգոստոսին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ գրանցվել է 19.3% անկում, ինչի արդյունքում 1.5 տոկոսային կետով խորացել է ծառայությունների հունվար-օգոստոս ամիսների կուտակային անկումը՝ կազմելով 10.8%:

Հունվար-հուլիս ամիսների տվյալներով², ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ» և «վարչարարական և օժանդակ գործունեություն» ենթաճյուղերի անկմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.1, 3.6 և 1.7 տոկոսային կետ: Ծառայությունների ճյուղում շարունակում է դրական դինամիկա դրսևորել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ենթաճյուղը, որին դասվող ծառայությունների ծավալն աճել է 10.7%-ով՝ ընդհանուր ոլորտի աճին նպաստելով 2.3 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում 6.5% աճ է գրանցվել նաև «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղում, որն ընդհանուր ծառայությունների աճին նպաստել է 0.9 տոկոսային կետով:

² Հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալների անկումը օգոստոսին խորացել է: Առևտրի ծավալների 12-ամսյա անկումը օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ կազմել է 14.8 տոկոս, ինչը 4.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան հուլիսի համապատասխան ցուցանիշը: Արդյունքում, հունվար-օգոստոս ամիսների կուտակային անկումը ևս խորացել է՝ հասնելով 11.5%:

2. ԱՐՏԱԽԱՆԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման ծավալները շարունակում են նվազել նախորդ տարվա համեմատ: Օգոստոսին արտահանման ծավալները նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ նվազել են 3.8%-ով, ինչն արտացոլում է որոշակի բարելավում նախորդ ամսվա նկատմամբ: Դրա շնորհիվ փոքր-ինչ մեղմվել է նաև հունվար-օգոստոս


ամիսների արտահանման կուտակային անկման ցուցանիշը՝ -6.4-ից դառնալով -6.0 տոկոս:

Հունվար-հուլիս ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների» արտահանման 26.7%, «մանածագործական արտադրանքի» 33.8% և «պատրաստի սննդի արտադրանքի» 8.6% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 4.5, 2.3 և 1.9 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին 5.2 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 19.4% աճը: **Այսինքն՝ առանց հանքարդյունաբերության աճի, արտահանման անկումը կլիներ ավելի քան 10%:**

Նշենք, որ ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել է հուլիս ամսվա արտահանման ցուցանիշը, ինչի արդյունքում արտահանման անկումը նախորդ տարվա հուլիսի նկատմամբ 5.9%-ից դարձել է 5.5%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների անկումը օգոստոսին փոքր-ինչ մեղմվել է: Ներմուծման ծավալների 12-ամսյա նվազումը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ կազմել է 4.1%, իսկ կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների անկումը կազմել է 12.4%՝ նախորդ ամսվա նկատմամբ բարելավվելով 1.2 տոկոսային կետով:

³ Հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ, բացառությամբ «պատրաստի սնունդ» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման: Առավել խոշոր բացասական դերակատարում է ունեցել ավտոմեքենաների ներմուծման 60.7% կրճատումը, ինչը ընդհանուր ներմուծման կրճատմանը նպաստել է 6.3 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ» (նվազումը՝ 58.1%), «մանածագործական արտադրանք» (նվազումը՝ 25.7%) և «սարքեր և սարքավորումներ» (նվազումը՝ 6.4%) ապրանքախմբերի ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.1, 1.4 և 1.0 տոկոսային կետ:

Ներմուծման ծավալներին դրական նպաստում են ունեցել միայն «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի 2.2% և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի 3.6% աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նաև ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում հուլիս ամսվա ներմուծման անկումը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 18.6%-ից դարձել է 17.8%, իսկ հունվար-հուլիս ամիսների անկումը՝ 13.7%-ից՝ 13.6%:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2020թ. հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը դանդաղել է 1.0 տոկոսային կետով, և կազմել է 4.7%: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.0 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.4 տոկոսով⁵:

Հունվար-օգոստոս ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 187,061.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 165,474.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 197,468.0 դրամ:

⁴ Հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:



⁵ Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-օգոստոս, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)






2020 թվականի հունվար-օգոստոսին ՀՀ դրամի միջին փոխարժեքը շարունակել է արժեզրկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-օգոստոսին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.4%: Սակայն, եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը մնում է արժևորված՝ 0.5%-ով: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում, որը կազմել է 7.3%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտների նվազման կուտակային տեմպը, տնտեսության անկման խորացմանը զուգահեռ, նույնպես խորացել է: Հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 6.0%-ով՝ նախորդ ամսվա 5.8%-ի փոխարեն: Հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են 5.3%-ով, որը 0.2 տոկոսային կետով ավելի ցածր է, քան հունվար-հուլիս ամիսների անկումը: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նվազել են 52.8%-ով, իսկ այլ եկամուտները՝ 11.7%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %




Ինչպես նախորդ ամիս, օգոստոսին ևս, հարկային եկամուտների նվազմանն ամենամեծ նպաստումն են ունեցել շահութահարկի (նվազումը՝ 15.9%), ԱԱՀ-ի (նվազումը՝ 6.1%) և մաքսատուրքի (նվազումը՝ 29.2%) անկումները, որոնցից նպաստումներն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել են համապատասխանաբար 2.1, 2.0 և 1.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-հուլիս		Հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.1	-5.1	-5.3	-5.3
ԱԱՀ	-6.6	-2.2	-6.1	-2.0
Շահութահարկ	-15.4	-2.2	-15.9	-2.1
Եկամտային հարկ	2.7	0.8	1.8	0.5
Ակցիզային հարկ	1.2	0.1	1.9	0.1
Շրջանառության հարկ	-3.5	-0.1	-3.6	-0.1
Արտոնագրային հարկ	-98.6	-0.3	-98.7	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	11.3	0.4	5.1	0.2
Մաքսատուրք	-28.3	-1.7	-29.2	-1.8
Սոցիալական վճար	15.0	0.2	20.8	0.3
Այլ հարկային եկամուտներ	20.2	0.3	21.8	0.3
Պետական տուրք	-15.9	-0.4	-19.1	-0.5

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Եկամուտների նվազման պայմաններում պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է արագանալ: Այսպես, հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 19.5 տոկոսով՝ կազմելով 1072.6 մլրդ դրամ: Ծախսերի աճի տեմպը թեև փոքր-ինչ դանդաղել է նախորդ ամսվա համեմատ, սակայն դեռևս մնում է բավական բարձր: Համեմատության համար նշենք, որ 2019թ. հունվար-օգոստոսին պետական բյուջեի ընդհանուր ծախսերի աճը կազմել էր 7.7%:

Հատկանշական է, որ ծախսերի բարձր աճի տեմպի պարագայում, առկա է կապիտալ ծախսերի զգալի թերակատարում: Այսպես, ընթացիկ ծախսերն աճել են 17.4 տոկոսով, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 54.9%: Միևնույն ժամանակ, կապիտալ ծախսերի փաստացի ծավալը կազմել է 79.4 մլրդ դրամ, որն ավելի փոքր է, քան նույնիսկ առաջին կիսամյակի ճշտված պլանը, որը կազմում է 118.2 մլրդ դրամ: **Այսինքն՝ կապիտալ ծախսերը շարունակում են թերակատարվել:**

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեի պակասուրդը մեծացել է: Պետական բյուջեի ծախսերի առաջանցիկ աճի հետևանքով ձևավորվել է 135.3 մլրդ դրամ պակասուրդ: Նախորդ ամսվա համեմատ, պակասուրդն աճել է մոտ 30.4 մլրդ դրամով: Ճգնաժամային պայմաններում, բյուջեի պակասուրդի աճը տրամաբանական է, քանի որ անհրաժեշտ է խթանել տնտեսական ակտիվությունը: Սակայն, երբ աճող պակասուրդը օգտագործվում է երկարաժամկետ տնտեսական աճին չնպաստող (կամ քիչ նպաստող) ծախսերի ֆինանսավորման համար, ապա դա կարող է մի կողմից չծառայել իր նպատակին՝ չխթանել տնտեսական ակտիվությունը, մյուս կողմից առաջացնել հարկաբյուջետային ռիսկեր՝ կապված պետական պարտքի կայունության հետ:

5.4. Պետական պարտք


2020թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,967.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ աճելով 14.3%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 7,482.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 15.8%-ով: Աճը տեղի է ունեցել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 13.5% և 23.2%:

Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 21.4 մլն ԱՄՆ դոլարով (1.9 մլն դոլարով՝ արտաքին և 19.5 մլն դոլարով՝ ներքին պարտքի աճի հաշվին) կամ 0.3%-ով:

2020թ. ընթացքում (2019թ. դեկտեմբերի համեմատ) ՀՀ կառավարության պարտքն աճել է 647.5 մլն ԱՄՆ դոլարով, որից 271.5-ը՝ արտաքին, իսկ 376 մլն դոլարը՝ ներքին պարտքի հաշվին:

Պարտքի աճի արագացումը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների նվազմամբ, այնպես էլ պետական բյուջեի ծախսերի աճով: Սակայն դրա աճի տեմպի հետագա արագացումից խուսափելու համար անհրաժեշտ է վերանայել առկա ռեսուրսների ծախսման ուղղությունները՝ առաջնահերթությունը տալով առավել հրատապ և տնտեսական ակտիվությանը նպաստող ծախսերին:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Թեև օգոստոսին գրանցվել է 12-ամսյա գնաճի որոշակի արագացում, գնաճային միջավայրը դեռևս մնում է բավական ցածր: Սկսած ապրիլից, գնաճը դրսևորել է արագացման միտում: Օգոստոսին 12-ամսյա գնաճը հուլիսի նկատմամբ շարունակել է արագանալ և կազմել է 1.8%: Հաշվի առնելով ցածր գնաճային միջավայրը և ամբողջական պահանջարկը խթանելու անհրաժեշտությունը՝ սեպտեմբեր ամսին ԿԲ-ն ևս մեկ անգամ նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը՝ սահմանելով այն 4.25%:


6.2. Ավանդներ և վարկեր

Վարկերի և ավանդների վերաբերյալ օգոստոս ամսվա ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում դեռևս չեն հրապարակվել:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ-ում համաճարակային իրավիճակը փոքր ինչ մեղմվել է օգոստոս ամսին: Ամսվա ընթացքում նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 169՝ հուլիսին գրանցված միջին օրական 420 նոր դեպքերի դիմաց: Արդյունքում, օգոստոսի ընթացքում գրանցված ընդհանուր դեպքերը ավելացել են 5231-ով, ինչը հուլիսի 13008-ի համեմատ բավականին փոքր է: Սակայն, սեպտեմբերի ընթացքում, գրանցվող օրական դեպքերը միջին հաշվով աճել են. սեպտեմբերի 1-25-ը ընկած ժամանակահատվածում նոր գրանցվող դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 195 դեպք:

Գծապատկեր 16. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



1 մլն բնակչի հաշվով դեպքերի թվով Հայաստանը փոքր-ինչ բարելավվել է դիրքերը՝ զբաղեցնելով աշխարհում 17-րդ տեղը: Սակայն, հարկ է նշել, որ 1 մլն

քնակչի հաշվով կատարված թեստերի քանակով ՀՀ-ի զբաղեցրած դիրքը վատթարացել է՝ նախորդ ամսվա 75-րդ հորիզոնականից դառնալով 89-րդը:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Հունվար-օգոստոս ամիսների տնտեսական ակտիվության անկումը ավելի է խորացել՝ հասնելով -6.4%-ի, ինչը բավական մտահոգիչ է, քանի որ սահմանափակումների մեղմման պայմաններում տնտեսական ակտիվությունը չի վերականգնվում:** ՏԱՑ-ի անկման խորացումը ցույց է տալիս, որ համավարակի տարածումը և կառավարության կողմից կիրառվող սահմանափակումները ունեցել են ավելի երկար ազդեցություն, քան սպասվում էր: Տնտեսությունը երրորդ եռամսյակում վերականգնման միտում չի դրսևորում, հետևաբար մինչև տարեվերջ կարելի է սպասել կուտակային տնտեսական անկման ավելի խորացման:

2. **Պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի աճի տեմպն արագանում է՝ ձևավորելով ռիսկեր հետագա մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:** Ճգնաժամային պայմաններում, բյուջեի պակասուրդի աճը տրամաբանական է, քանի որ անհրաժեշտ է խթանել տնտեսական ակտիվությունը: Սակայն, երբ աճող պակասուրդը օգտագործվում է երկարաժամկետ տնտեսական աճին չնպաստող ծախսերի ֆինանսավորման համար, ապա պակասուրդի աճը կարող է մի կողմից չծառայել իր նպատակին՝ չնպաստել տնտեսական ակտիվության աճին, մյուս կողմից առաջացնել հարկաբյուջետային ռիսկեր՝ կապված պետական պարտքի կայունության հետ: Աճող հարկաբյուջետային խթանների պայմաններում տնտեսական անկման խորացումը վկայում է ծախսերի անարդյունավետության մասին, ինչը պետք է ստիպի կառավարությանը վերանայել սահմանափակ պետական ռեսուրսների օգտագործման առաջնահերթությունները:

3. **Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում դրսևորել է որոշակի բարելավում օգոստոսին, սակայն վերջինիս տեմպը կարծես թե չի պահպանվում սեպտեմբերին:** Կորոնավիրուսով վարակման հաստատված դեպքերի քանակը բավական բարձր է այլ երկրների համեմատությամբ: Այս իրավիճակի հետ կապված անորոշությունները դեռևս պահպանվում են՝ հիմքեր ստեղծելով ավելի խոր տնտեսական անկման համար:

4. **Կապիտալ ծախսերի թերակատարման չլուծված խնդիրը շարունակում է մնալ տնտեսական անկման խորացման պատճառներից մեկը:** Ուշագրավ է, որ կառավարությունը հաճախ բարձրաձայնում է կապիտալ ծախսերի կարևորության մասին: Հիմնականում վկայակոչվում են կառուցապատված ճանապարհները՝ նշելով, որ այդ աշխատանքների ծավալը աննախադեպ մեծ է: Մինչդեռ, հունվար-օգոստոս ամիսների փաստացի կապիտալ ծախսերի ծավալը

մոտ 33%-ով ավելի փոքր է, քան հունվար-հունիս ամիսների ճշտված պլանը: Տնտեսական անկման պայմաններում այս երևույթը զգալի բացասական հետևանքներ կունենա ինչպես ընթացիկ տնտեսական ակտիվության, այնպես էլ տնտեսության ներուժի վրա:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: